ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Համայնքի խոշորացումից հետո համայնքապետարանի աշխատակազմի հաստատված կառուցվածքում անհրաժեշտություն է առաջացել կատարել փոփոխություններ և ավելացնել առաջատար մասնագետի 4 հաստիք՝ քաղաքաշինության ,գյուղատնտեսության և բնապահպանության ու ֆինանսատնտեսական բաժիններում,ինչը պայմանավորված է Սիսիան համայնքի խոշորացումից հետո անցած՝ ավելի քան 9 ամիսների ընթացքում կատարված աշխատանքների ընթացքում ի հայտ եկած խնդիրներով:

1) Աշխատակազմի քաղաքաշինության բաժնում նախատեսվում է ավելացնել համայնքային ծառայության մեկ առաջատար մասնագետի հաստիք: Առաջարկվող փոփոխությունը հիմնավորվում է հետևյալ փաստարկներով.

- Սիսիան համայնքի տարածքային մեծ փռվածությամբ պայմանավորված, ինչպես նաև համայնքում ինքնակամ շինարարության դեպքերը բացահայտելու և օրինականությունն ապահովելու, հանրային վայրերի խնամքի,սանիտարական մաքրման, շենքերի ու շինությունների նպատակային օգտագործման համար անհրաժեշտություն է առաջացել ունենալ նշված հարցի համար պատասխանատու առաջատար մասնագետի առանձին հաստիք:

2) Աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնում նախատեսվում է ավելացնել համայնքային ծառայութան երկու առաջատար մասնագետի հաստիք: Առաջարկվող փոփոխությունները պայմանավորված են հետևյալ հանգամանքներով.

- Առաջատար մասնագետներից մեկը պետք է իրականացնի գյուղատնտեսական մշակաբույսերի համախառն բերքի, աշնանացանի, գարնանացանի ընթացքի վերաբերյալ ,գյուղատնտեսական մշակաբույսերի համախառն բերքի, միջին բերքատվության, բազմամյա տնկարկների տարածությունների, աշնանացանի և գարնանացանի ընթացքի վերաբերյալ հաշվառման, ինչպես նաև համայնքի բնակավայրերի բնակչության սեռատարիքային կազմի հաշվառման աշխատանքները:
- Գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի մյուս առաջատար մասնագետը պետք է զբաղվի Սիսիան քաղաքի տնային կենդանիների հաշվառման աշխատանքներով, կազմի բազաները համաքաղաքային կանոններին համապատասխան և դրանց թույլտվությունների տրամադրման փաստաթղթերը,վերահսկողություն իրականացնի համայնքի սեփականություն հանդիսացող ոռոգման ցանցերի շահագործման, դրանց շինարարության և վերանորոգման աշխատանքների նկատմամբ, աջակցի անասնահակահամաճարակային տարեկան միջոցառումների պետական ծրագրի իրականացման աշխատանքներին.

3) Աշխատակազմի ֆինանսատնտեսական բաժնում նախատեսվում է ավելացնել համայնքային ծառայության առաջատար մասնագետի մեկ հաստիք:

- ֆինանսատնտեսական բաժնի առաջատար մասնագետի ավելացվող հաստիքը զբաղեցնող համայնքային ծառայողը պետք է համայնքի բյուջեն հաստատվելուց հետո ընդունի և ստուգի համայնքի ենթակայության կազմակերպությունների կողմից կազմված նախահաշիվները,համայնքային ենթակայության ոչ առևտրային կազմակերպությունների պահանջագրերը՝ ամսական ծախսերի վերաբերյալ,մասնակցի համայնքային ենթակայության ոչ առևտրային

կազմակերպությունների տարիֆիկացիոն ցուցակների հսկողությանը,պատրաստի համայնքային ենթակայության ոչ առևտրային կազմակերպությունների ֆինանսավոր ման համար անհրաժեշտ փաստաթղթերը, կազմի համայնքի բյուջեի ամսական հաշվետվություն, ընդունի, ստուգի և ամփոփի համայնքային ենթակայության կազմակերպությունների եռամսյակային և տարեկան հաշվետվությունները, ինչպես նաև տարեկան հաշվեկշիռները:

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Կ.ԻՎԱՆՅԱՆ

15.01.2024թ

ՏԵՂԵԿԱՆՔ

Սիսիան համայնքի ավագանու կողմից սույն որոշման նախագիծն ընդունվելու դեպքում համայնքային բյուջեի ծախսային մասի 4111 աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ հոդվածում կկատարվի համապատասխան պլանավորումներ:

ՀԱՄԱՅՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Կ.ԻՎԱՆՅԱՆ

15.01.2024թ